**ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**
**կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին**

Դատական դեպարտամենտը ստորև ներկայացնում է իր կարիքների համար թղթի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԷԱԱՊՁԲ-18/01» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2018 թվականի նոյեմբերի 21-ին կնքված N ԴԴ-ԷԱԱՊՁԲ-18/01-1 պայմանագրում 2018 թվականի դեկտեմբերի 24-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ՝
Առաջացել է Պայմանագրով նախատեսված ապրանքների լրացուցիչ գնման անհրաժեշտություն:

Փոփոխության նկարագրություն՝
Պայմանագրի 3.1 կետում նշված «32 693 760 (երեսուներկու միլիոն վեց հարյուր իննսուներեք հազար յոթ հարյուր վաթսուն) ՀՀ դրամ» բառերը փոխարինվել է «35 962 560 (երեսունհինգ միլիոն ինը հարյուր վաթսուներկու հազար հինգ հարյուր վաթսուն) ՀՀ դրամ» բառերով, Պայմանագրի N 1 հավելված հանդիսացող ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑՈՒՄ ապրանքի ընդհանուր քանակը սյունակում նշված «45408» թիվը փոխարինվել է «49948» թվով, ապրանքի ընդհանուր գինը/ՀՀ դրամ սյունակում նշված «32 693 760» թիվը փոխարինվել է «35 962 560» թվով, ապրանքի մատակարարման սյունակը լրացնել է նոր տողով, ինչպես նաև պայմանագրի N 2 հավելված հանդիսացող ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ հաստատվել է նոր խմբագրությամբ:

Փոփոխության հիմնավորում՝
Պայմանագրի 8.5:

Պատվիրատու՝ **Դատական դեպարտամենտ**